



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 17(408) «06» հունիսի 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ	
394	««Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-31-Ն օրենքը.....	4
	ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ	
395	«Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-79-Ն հրամանագիրը.....	5
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
396	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 138-Ն որոշումը.....	11
397	«Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմի ջրային, կենսառեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 170-Ն որոշումը.....	14
398	«Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 169-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 171-Ն որոշումը.....	22

399	«Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 172-Ն որոշումը.....	31
ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
400	«Արցախզագ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 44Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 31-Ն որոշումը.....	44
401	«Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածներում մի շարք ռադիոհաճախականությունների օգտագործման N 0027 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 32-Ա որոշումը.....	46
402	«Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 33-Ն որոշումը.....	47
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
403	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 94 հրամանը.....	51

404	«Քաղաքաշինության բնագավառի լիցենզիայի գործունեության տրամադրման մասին» ԱՀ քաղաքաշինության նախարարության N 149-Ա հրամանը	52
-----	---	----

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2020 թվականի
հունիսի 30-ին

**«ՀԱՇՎԵՔՆԻԶ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հաշվեքննիչ պալատի մասին» 2017 թվականի հուլիսի 21-ի ՀՕ-12-Ն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, որից առնվազն հինգ տարին՝ ղեկավարի պաշտոնում» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հուլիսի 2
Ստեփանակերտ
ՀՕ-31-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒԻ,
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի հունիսի 26-ի ՆՀ-67-ՆԳ հրամանագիրը՝ **ո թ ո շ ու մ եմ**.

1. Ստեղծել «Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Հաստատել Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակի կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հաստատել Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի (գաղտնի):

4. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հուլիսի 4
Ստեփանակերտ
ՆՀ-79-Ն

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԱՐՑԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակի (այսուհետ՝ գրասենյակ) նպատակը Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) և Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի քարտուղարի (այսուհետ՝ Քարտուղար) բնականոն գործունեությունն ապահովելն է:

2. Գրասենյակի հիմնադիրը Արցախի Հանրապետության Նախագահն է:

3. Գրասենյակը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, ամրացված գույք և իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Գրասենյակի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Արցախի Հանրապետության Նախագահը:

4. Գրասենյակի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

5. Գրասենյակը գործում է Արցախի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

6. Գրասենյակի անվանումն է՝

1) հայերեն՝ Արցախի Հանրապետության Անվտանգության խորհրդի գրասենյակ:

2) ռուսերեն՝ Аппарат Совета безопасности Республики Арцах.

3) անգլերեն՝ Office of the Security Council of the Artsakh Republic:

7. Գրասենյակն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր անվանմամբ հայերեն կլոր կնիք և ձևաթղթեր: Գրասենյակը կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ, ինչպես նաև Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր անվանմամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, ձևաթղթեր:

8. Գրասենյակի գտնվելու վայրն է՝ ք. Ստեփանակերտ, Փետրվարի 20-ի փողոց, N 1:

2. ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Գրասենյակի խնդիրներն են Խորհրդի և Քարտուղարի գործառույթների իրականացմանն ուղղված համապատասխան աշխատանքների կազմակերպումը:

10. Գրասենյակը ապահովում է՝

1) Խորհրդի նիստերի և օպերատիվ խորհրդակցությունների, Քարտուղարի աշխատանքային և արտագնա խորհրդակցությունների կազմակերպումը, ինչպես նաև այդ նիստերի և խորհրդակցությունների համար անհրաժեշտ նյութերի և որոշումների նախագծերի նախապատրաստումը.

2) տեղեկատվական, վերլուծական, կազմակերպչական և տեխնիկական աջակցությունը Խորհրդի և Քարտուղարի գործունեությանը.

3) Արցախի Հանրապետության անվտանգության սպառնալիքներին վերաբերող տեղեկատվության հավաքումը և ամփոփումը, տեղեկատվության ամփոփագրերի, ինչպես նաև ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

4) Խորհրդի, Խորհրդի միջգերատեսչական հանձնաժողովների աշխատանքային պլանների մշակումը, ինչպես նաև սեփական գործունեության պլանավորումը.

5) Խորհրդի որոշումների կատարման մշտադիտարկման իրականացումը և Անվտանգության խորհրդի որոշումների կատարման վերաբերյալ հաշվետվությունների կազմումը.

6) Խորհրդի որոշումների նախագծերի համաձայնեցումը Խորհրդի անդամների հետ.

7) տեղեկատվության հավաքումը և ամփոփումը՝

ա. ազգային անվտանգության ապահովման բնագավառում պետության քաղաքականության հիմնական ուղղությունների իրագործման ընթացքի վերաբերյալ,

բ. Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ,

գ. Արցախի Հանրապետության մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության վերաբերյալ,

դ. Արցախի Հանրապետությունում օրինականության և իրավակարգի պահպանության վիճակի վերաբերյալ,

ե. ազգային անվտանգության ապահովման բնագավառում համագործակցության վերաբերյալ,

զ. Արցախի Հանրապետության տեղեկատվական անվտանգության իրավիճակի վերաբերյալ,

է. ազգային անվտանգության ապահովման բնագավառում հանրային իշխանության մարմինների գործունեության համակարգման վերաբերյալ:

11. Գրասենյակը նախապատրաստում է Քարտուղարի կողմից ընդունվող իրավական ակտերի նախագծերը, ինչպես նաև մասնակցում է ազգային անվտանգության ապահովմանն առնչվող օրենքների մշակմանը:

12. Խորհրդի և Քարտուղարի գործունեությունն ապահովելու նպատակով Գրասենյակին կարող են վերապահվել այլ գործառույթներ:

3. ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Գրասենյակի գործունեությունը ղեկավարում և վերահսկում է Քարտուղարը, ընթացիկ գործունեությունն ապահովում է գրասենյակի ղեկավարը:

14. Քարտուղարը նշանակում և ազատում է իր տեղակալին, օգնականին, մամուլի քարտուղարին և գրասենյակի ղեկավարին, որոնք անմիջականորեն հաշվետու և ենթակա են Քարտուղարին:

15. Գրասենյակի մյուս աշխատողներին նշանակում և ազատում է գրասենյակի ղեկավարը:

16. Գրասենյակի ղեկավարը՝

1) համակարգում է գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը.

2) պատասխանատու է գրասենյակի գործառույթների իրականացման համար.

3) վարում է Քարտուղարի պաշտոնական փոստը.

4) Քարտուղարի հաստատմանն է ներկայացնում գրասենյակի գործավարության կարգը և պաշտոնների անձնագրերը.

5) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է գրասենյակին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

6) Քարտուղարի հանձնարարությամբ ներկայացնում է գրասենյակն այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ փոխհարաբերություններում, իր իրավասության սահմաններում հանդես է գալիս գրասենյակի անունից, ինչպես նաև տալիս է գրասենյակի անունից հանդես գալու լիազորագրեր.

7) Քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից անցկացվող նիստերին և խորհրդակցություններին.

8) համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

9) Քարտուղարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գրասենյակի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ.

10) ապահովում է Քարտուղարի խորհրդակցությունների և հանդիպումների արձանագրությունների նախապատրաստումը.

11) ապահովում է Քարտուղարի ցուցումների և հանձնարարականների կատարումը.

12) իր գործողություններն իրականացնելիս ընդունում է հրամաններ.

13) իրականացնում է Քարտուղարի այլ հանձնարարականներ:

4. ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

17. Գրասենյակի կառուցվածքում ընդգրկվում են՝

1) Քարտուղարը.

2) Քարտուղարի տեղակալը, գրասենյակի ղեկավարը, Քարտուղարի օգնականը և մամուլի քարտուղարը.

3) Գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումները:

5. ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԸ, ՕԳՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՍՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

18. Քարտուղարի տեղակալն իրականացնում է Քարտուղարի կողմից իրեն վերապահված լիազորությունները:

19. Քարտուղարի օգնականը՝

1) Քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում իր գործառույթներին վերաբերող հարցերի քննարկմանը.

2) Քարտուղարի կողմից սահմանված պարբերականությամբ ամփոփ տեղեկատվություն է ներկայացնում Քարտուղարին իրեն հանձնարարված ոլորտում առկա իրավիճակի, արդի հիմնահարցերի վերաբերյալ և առաջարկություններ է ներկայացնում Քարտուղարին դրանց լուծման վերաբերյալ.

3) մասնակցում է Քարտուղարի այցերին, բանակցություններին, խորհրդակցություններին, հանդիպումներին, ուղևորություններին և դրանց նախապատրաստման կազմակերպչական աշխատանքներին.

4) իր գործառույթներն իրականացնելիս համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

5) վերլուծում է Քարտուղարի կողմից իրեն մակագրված փոստը և ամփոփ տեղեկատվություն ներկայացնում Քարտուղարին.

6) իրեն հանձնարարված ոլորտներում գրասենյակի աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ.

7) կատարում է Քարտուղարի առանձին հանձնարարականներ:

20. Քարտուղարի մամուլի քարտուղարը՝

1) ներկայացնում է Քարտուղարի պաշտոնական տեսակետները Արցախի Հանրապետության և օտարերկրյա պետությունների տեղեկատվության միջոցներին.

2) կազմակերպում է Քարտուղարի հարցազրույցները, ասուլիսները և հանդիպումները լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ.

3) Քարտուղարին առաջարկություններ է ներկայացնում նրա հրապարակային ելույթների վերաբերյալ, դրանք կազմելիս համագործակցում Քարտուղարի օգնականի հետ.

4) Քարտուղարի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով.

5) լուսաբանում է Քարտուղարի ու գրասենյակի գործունեությունը և դրա վերաբերյալ պատրաստում մամուլի հաղորդագրություններ.

6) վարում է Խորհրդի պաշտոնական կայքը:

6. ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

21. Գրասենյակի կառուցվածքային ստորաբաժանումներն են քարտուղարությունը և վարչությունները:

22. Վարչությունները գործում են վարչության ղեկավարի անմիջական ղեկավարությամբ և ապահովում են իրենց ոլորտներում Խորհրդի և

Քարտուղարի գործառույթների իրականացումը: Վարչությունները կարող են ունենալ կանոնադրություններ, որոնք հաստատվում են Քարտուղարի կողմից:

23. Վարչությունների կազմում կարող են ստեղծվել կառուցվածքային ստորաբաժանումներ՝ բաժիններ:

24. Գրասենյակի վարչություններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

25. Վարչությունների ղեկավարները քարտուղարի հանձնարարությամբ կարող են հանդես գալ որպես ոլորտային միջգերատեսչական հանձնախմբերի անդամներ, իսկ մասնագետները՝ աշխատանքային խմբերի անդամներ:

7. ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԳՈՒՅՔԸ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Գրասենյակի գույքը ձևավորվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

27. Գրասենյակի գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու, աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

28. Գրասենյակն իրավունք ունի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործել, տիրապետել և տնօրինել իրեն հանձնված գույքը (գույքային իրավունքները):

29. Գրասենյակի պահպանման ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից: Գրասենյակը կարող է նաև ֆինանսավորվել օրենքով չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներից:

30. Գրասենյակն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Գրասենյակի պահպանման կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով:

31. Գրասենյակը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և իրավասու պետական մարմիններին ներկայացնում է համապատասխան հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Կ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2020թ.

N 138-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է**.

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշման N 2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ
ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ
ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին տարւայակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ այդ թվում՝	-	-	-	-
10			ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	(148 500,0)	(148 500,0)	(148 500,0)
	2		Ծերություն	-	(5 000,0)	(140 000,0)	(20 000,0)
		1	Ծերություն	-	(5 000,0)	(140 000,0)	(20 000,0)
		06	Աշխատանքային կենսայոջակներ	-	(5 000,0)	(140 000,0)	(20 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(5 000,0)	(140 000,0)	(20 000,0)
	4		Ընտանիքի անդամներ և զավակներ	-	(120 500,0)	(8 500,0)	(125 500,0)
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	(120 500,0)	(8 500,0)	(125 500,0)
		03	Պետական նպաստներ	-	(102 000,0)	-	(102 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(102 000,0)	-	(102 000,0)
		07	Զինվորական և փրկարարական ծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, զերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի հատուցում	-	(18 500,0)	(8 500,0)	(23 500,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(18 500,0)	(8 500,0)	(23 500,0)
	7		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	(23 000,0)	-	(3 000,0)
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ	-	(23 000,0)	-	(3 000,0)

			դասերին չպատկանող)				
		01	Վերաբնակիչների և փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ	-	(20 000,0)	-	-
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(20 000,0)	-	-
		04	Ամենամայա դրամական օգնություններ և պարգևավճարներ	-	(3 000,0)	-	(3 000,0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	(3 000,0)	-	(3 000,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉՂԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	-	148 500,0	148 500,0	148 500,0
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	148 500,0	148 500,0	148 500,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	148 500,0	148 500,0	148 500,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	148 500,0	148 500,0	148 500,0
			ԱՀ կառավարություն	-	148 500,0	148 500,0	148 500,0

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 հուլիսի 2020թ.

N 170-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՐԱՅԻՆ, ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՄԵՐԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ
ՄԹՆՈԼՈՐՏ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ
17-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին»
օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «ժգ» ենթակետը և «Նորմատիվ իրավական
ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության
կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի
աշխատակազմի ջրային, կենսառեսուրսների, թափոնների և մթնոլորտ
արտանետումների կառավարման գործակալության կանոնադրությունը՝
համաձայն N 1 հավելվածի:

2) Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի
աշխատակազմի ջրային, կենսառեսուրսների, թափոնների և մթնոլորտ
արտանետումների կառավարման գործակալության կառուցվածքը՝
համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության
կառավարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի «Արցախի Հանրապետության
բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության
աշխատակազմի բնական ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ
արտանետումների կառավարման գործակալության կանոնադրությունը և
կառուցվածքը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 733 որոշումն ուժը
կորցրած ճանաչելու մասին» N 168-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՎԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՐԱՅԻՆ, ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՄՆԵՐԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ
ՍԹՆՈՒՈՐՍ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմի ջրային, կենսառեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն) Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն օրենքով, ինչպես նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առանձին դեպքերում, մատուցում է ծառայություններ կենսաբազմազանության պահպանության և կենսառեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների և անտառային պաշարների) կառավարման, քաղցրահամ ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա), թափոնների, մթնոլորտ արտանետումների և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կառավարման բնագավառում՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Գործակալությունն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ: Գործակալությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որը, կոմիտեի նախագահի ներկայացմամբ, հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

3. Գործակալությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության օրենքներին, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին, սույն կանոնադրությանը և իրավական այլ ակտերին համապատասխան:

4. Գործակալությունն, իր իրավասության սահմաններում, Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Գործակալությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և կոմիտեի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Գործակալությունն կարող է ունենալ իր անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Գործակալության գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Առաքելյան փողոց, N 14գ:

2. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Գործակալության նպատակներն ու խնդիրներն են՝

1) կենսառեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների և անտառային պաշարների) կառավարման ոլորտում՝

ա. Արցախի Հանրապետության տարածքում բնական էկոհամակարգերի, ներառյալ լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների, բնության ժառանգության գիտական

ուսումնասիրության, պահպանության, վերարտադրության և կայուն օգտագործման ապահովումը, ինչպես նաև այդ ոլորտներում պետական քաղաքականության ձևավորմանն ու կառավարմանն աջակցությունը,

բ. էկոհամակարգերի բազմազանության ու դրանց կենսառեսուրսների պահպանության ու վերարտադրության ապահովումը,

գ. բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների հաշվառման, գույքագրման, տեղեկատվական բանկի ու կենսառեսուրսների կադաստրների ստեղծման ու վարման իրականացման ապահովումը,

դ. կենսաբազմազանության մոնիթորինգի համակարգի ստեղծման ու իրականացման ապահովումը,

ե. կենդանական և բուսական բնական ռեսուրսների օգտագործման թույլատրելի չափաքանակների հաստատման համար հիմնավորումների ապահովումը,

զ. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և կայուն օգտագործման աշխատանքների համակարգումը.

2) ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում՝

ա. Արցախի Հանրապետության ջրային ռեսուրսների պահպանության ու արդյունավետ օգտագործման նպատակով քաղցրահամ մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների քաղաքականության ձևավորումն ու կառավարումը,

բ. Արցախի Հանրապետության ջրի ազգային պաշարի ապահովմանն ու ավելացման միջոցառումների իրականացման ապահովումը,

գ. Արցախի Հանրապետության օգտագործելի ջրերի քանակի և որակի նախնական գնահատման, բնակչության ու տնտեսության ներկայի և ապագայի ջրի պահանջարկի ուրվագծման ապահովումը,

դ. Արցախի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի նախապատրաստման աշխատանքների կատարման ապահովումը,

ե. ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի շրջանակներում ջրային ռեսուրսների կառավարմանն ու պահպանությանն աջակցելը,

զ. ջրային ռեսուրսների կառավարմանն ու պահպանությանն բնագավառում գիտատեխնիկական հիմնարար ու կիրառական հետազոտությունների կատարման և արդյունքների ներդրման ապահովումը,

է. ջրային ռեսուրսների որակական և քանակական մշտադիտարկման (մոնիթորինգի) պահանջարկի ձևավորման ապահովումը,

ը. պետական ջրային կադաստրի վարման և ջրային հաշվեկշռի կազմման ապահովումը,

թ. ջրավազանային կառավարման պլանների մշակման ապահովումը.

3) թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման ոլորտում՝

ա. թափոնների գործածության արդյունքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցման ապահովումը,

բ. թափոնների անդրսահմանային փոխադրումների ընթացքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության կանխարգելման ապահովումը,

գ. օգոնային շերտը քայքայող նյութերի առաքման և մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների նորմավորման ապահովումը.

4) հողերի պահպանության ոլորտում՝

ա. հողերի բերրիության, ինչպես նաև հողի այլ օգտակար հատկությունների պահպանում, բարելավում և արդյունավետ օգտագործումը,

բ. խախտված հողերի վերականգնումը, դրանք տնտեսական շրջանառության մեջ ներառումը,

գ. հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, կրկնակի աղակալումից, կարծրացումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտումից, սողանքներից, անապատացումից, հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանումը,

դ. բնապահպանական միջոցառումների, բնության հուշարձանների, արգելավայրերի, կանաչապատ գոտիների օգտագործմանն ու պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

5) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ոլորտում՝

ա. էկոլոգիական անվտանգության պահանջների և բնապահպանական սահմանափակումների հիման վրա կայուն զարգացմանը նպաստելը,

բ. հիմնադրույթային փաստաթղթի դրույթների և նախատեսվող գործունեության դրական ազդեցությունների պահպանման, վնասակար ազդեցությունների ու դրանց հետևանքների կանխարգելման, նվազեցման կամ բացառման ապահովումը,

գ. արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովումը:

3. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Գործակալությունն իր նպատակների իրականացման և խնդիրների լուծման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կենսառեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների և անտառային պաշարների) կառավարման ոլորտում՝

ա. Արցախի Հանրապետության տարածքում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտների, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների, դենդրոպարկերի կենսաբանական բազմազանության հաշվառման, տեղեկատվական բանկի ստեղծման պատվերի տեղադրում,

բ. Արցախի Հանրապետության վայրի բուսական և կենդանական պաշարների գույքագրում և մոնիթորինգ, տեղեկատվական բանկի ու կադաստրների վարում,

գ. բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների կայուն օգտագործման, վերականգնման, վերարտադրության և ուսումնասիրությունների վերաբերյալ պատվերի տեղադրում,

դ. բնության հատուկ պահպանվող տարածքներում, դենդրոպարկերում և հողային ռեսուրսների և կանաչ տարածքների վերաբերյալ առաջարկությունների և կարծիքների տրամադրում,

ե. բնական էկոհամակարգերում, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի, ռեկրեացիոն և տնտեսական գործունեության զարգացման նպատակով պատվերի տեղադրում,

զ. օտարածին բուսական և կենդանական տեսակներից ու կենդանի վերափոխված օրգանիզմներից կենսաբազմազանության անվտանգությունն ապահովող աշխատանքների կազմակերպում,

է. Արցախի Հանրապետության վայրի բուսական և կենդանական պաշարների, բնության հատուկ պահպանվող տարածքների գույքագրում, մոնիթորինգ, տեղեկատվական բանկի ստեղծում ու կադաստրների վարում,

ը. Արցախի Հանրապետության կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման պայմանագրերի կնքում.

2) ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում՝

ա. ջրավազանային կառավարման պլանների մշակման և դրանց իրականացման ապահովում,

բ. ջրօգտագործման թույլտվությունների տրամադրում,

գ. ջրօգտագործման թույլտվությամբ տրված իրավունքի՝ այլ անձանց փոխանցման ձևակերպում,

դ. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործողին ջրօգտագործման թույլտվության ստացման պահանջից ազատում,

ե. ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման առաջադրանքի ձևավորումը և դրանց մասին հաշվետվությունների գրանցում,

զ. պետական ջրային կադաստրում փաստաթղթերի գրանցումը և տեղեկատվության տրամադրում,

է. ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում ջրի կորուստների չափաքանակների՝ սահմանված կարգով համաձայնեցում,

ը. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր կողմից մշակված փաստաթղթերի մասին հասարակությանը ծանուցման կազմակերպում,

թ. ջրակոհամակարգերի պահպանման գոտիների քարտեզների մշակման պատվերների տեղադրում,

ժ. ջրօգտագործողների կողմից ջրօգտագործման թույլտվության պահանջների խախտման դեպքում՝ ջրօգտագործման թույլտվության կասեցումը, փոփոխումը կամ չեղյալ համարում,

Ճա. ջրային ռեսուրսների մոնիթորինգի պատվերի տեղադրում.

3) թափոնների և մթնոլորտ արտանետումների ոլորտում՝

ա. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար թափոնների տեղադրման սահմանաքանակների հաստատում,

բ. թափոնների պետական կադաստրի, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման ռեսուրսների վարում,

գ. թափոններ առաջացնողների կազմած՝ թափոնների անձնագրերի համաձայնեցում,

դ. կոմիտեի նախագահին վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրումների թույլտվությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

ե. օգոնային շերտը քայքայող նյութերի առաքման (ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման) թույլտվությունների տրամադրում,

զ. մթնոլորտ վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նախագծերի քննարկում և մթնոլորտ արտանետման թույլտվությունների տրամադրում.

4) հողերի պահպանության ոլորտում՝

ա. սահմանված կարգով Արցախի Հանրապետությունում հողի բերրի շերտի օգտագործման մասին տվյալների և տեղեկությունների հավաքագրում և ամփոփում,

բ. իր իրավասության սահմաններում հատուկ պահպանվող տարածքների հողամասերի սահմանների ճշգրտմանը մասնակցելը և բնապահպանական նշանակության հողերի օգտագործման, նրանց վիճակի, այդ թվում՝ աղտոտվածության պետական հաշվառման և վարչական վիճակագրական ռեգիստրի վարման կազմակերպում,

գ. հողօգտագործման, հողերի աղտոտման և հողերի վրա այլ վնասակար ներգործությունների բնապահպանական նորմերի սահմանման սկզբունքներին համապատասխան իրավական ակտերի մշակում և տեխնիկական առաջադրանքների կազմում.

5) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ոլորտում՝

ա. հիմնադրույթային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության ազդեցության գնահատումների կազմակերպում,

բ. գործունեության իրականացման նախաձեռնության մասին ազդակիր համայնքի ղեկավարներին և հասարակայնության իրազեկման ապահովում.

6) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառնությունների իրականացում:

4. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

9. Գործակալությունը կառավարում է կոմիտեի նախագահը: Գործակալության անմիջական ղեկավարումն իրականացնում է գործակալության պետը, որին, քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթում սահմանված կարգով հաղթող ճանաչվելուց հետո, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է կոմիտեի նախագահը: Իր գործունեության ընթացքում գործակալության պետն առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով, կոմիտեի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև իրավական այլ ակտերով:

10. Գործակալության պետը պատասխանատու է գործակալության առջև դրված խնդիրների և գործառնությունների պատշաճ կատարման համար, ինչպես նաև դրանց՝ օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխանության համար:

11. Գործակալության պետը հաշվետու է կոմիտեի նախագահին և նրա տեղակալին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև կոմիտեի աշխատակազմի ղեկավարին:

12. Գործակալության պետը՝

1) ղեկավարում է գործակալության ընթացիկ գործունեությունը.

2) կոմիտեի նախագահին կամ նրա տեղակալին ներկայացնում է առաջարկություններ օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի, նպատակների և խնդիրների վերաբերյալ.

3) իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության և գործակալության անունից, ինչպես նաև տալիս է գործակալության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) մասնակցում է կոմիտեի նախագահի հրամանով կազմավորվող Արցախի Հանրապետության բնապահպանական փորձաքննության հանձնաժողովների նիստերին.

5) իր իրավասության սահմաններում գործակալության աշխատողներին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է առաջարկություններ այդ աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ.

6) կոմիտեի նախագահին կամ նրա տեղակալին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գործակալության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

7) ապահովում է կոմիտեի նախագահի հրամանների և ցուցումների, ինչպես նաև կոմիտեի նախագահի տեղակալի ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում կոմիտեի նախագահին կամ նրա տեղակալին.

8) կոմիտեի և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

9) լսում է գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները.

10) իրականացնում է վերահսկողություն գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

11) կումիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ գործակալության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև գործակալությունում խորհրդակցական մարմիններ ստեղծելու վերաբերյալ:

12) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

13) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13. Գործակալության պետի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում այդ պաշտոնը զբաղեցվում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված՝ փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

5. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Օրենքով, իրավական այլ ակտերով, կումիտեի և սույն կանոնադրություններով գործակալությանը վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է կումիտեի աշխատակազմը:

15. Գործակալության պետի ներկայացմամբ կումիտեի նախագահի հրամանով գործակալությունում ստեղծվում և գործում են պետական բնապահպանական փորձաքննության հանձնաժողովներ, որոնք գործում են կումիտեի նախագահի կողմից հաստատված կանոնակարգերով:

16. Գործակալությունը պատասխանատվություն է կրում միայն ներկայացված նյութերի հիման վրա իր կողմից ընդունված որոշումների հավաստիության և արժանահավատության համար:

17. Գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

18. Գործակալության վերակազմակերպման ու նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և իրավական այլ ակտերով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՋՐԱՅԻՆ, ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՄՆԵՐԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄԹՆՈԼՈՐՏ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

1. Կենսառեւորման կառավարման բաժին
2. Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման բաժին
3. Ջրային ռեսուրսների կառավարման բաժին

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 հուլիսի 2020թ.

N 171-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅՆԵՄԲԵՐԻ 17-Ի N 169-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՃԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «ժգ» ենթակետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 17-ի «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի N 822-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 169-Ն որոշումը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչությունը (այսուհետ՝ տեսչություն) Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի (այսուհետ՝ նաև կոմիտե) աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառնություններ, ինչպես նաև կիրառում է պատասխանատվության միջոցներ շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և ընդերքօգտագործման բնագավառներում՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Տեսչությունն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ: Տեսչությունը գործում է համաձայն իր կանոնադրության, որն Արցախի Հանրապետության բնապահպանության կոմիտեի նախագահի (այսուհետ՝ կոմիտեի նախագահ) ներկայացմամբ հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

3. Տեսչության լիազորությունները սահմանվում են «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքով, Արցախի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով և այլ օրենքներով:

4. Տեսչությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, սույն կանոնադրությանը և իրավական այլ ակտերին համապատասխան:

5. Տեսչությունն օրենքով կամ իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Տեսչությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և տեսչության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ ու անհատականացման այլ միջոցներ: Տեսչությունը կարող է ունենալ իր անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. Տեսչության գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Առաքելյան փողոց, N 14գ:

2. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՂԻՐՆԵՐԸ

8. Տեսչության նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

9. Տեսչության խնդիրներն են՝

1) բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ

վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը.

2) շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

3. ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Տեսչությունն իր նպատակները և խնդիրներն իրականացնելու համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում հետևյալ ուղղություններով՝

1) մթնոլորտային օդի պահպանություն՝

ա. անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվությունների առկայության և այդ թույլտվություններով սահմանված նորմատիվների պահպանում,

բ. մթնոլորտային օդի վրա ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների ու պահանջների պահպանում,

գ. մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության նորմերի ու պահանջների պահպանում,

դ. մթնոլորտային օդն աղտոտող արտանետումների մաքրման և հսկողության համար տեղակայված կառույցների ու սարքավորումների առկայության և դրանց կառուցման ու շահագործման ընթացքում մթնոլորտային օդի պահպանության պահանջների ու կանոնների պահպանում,

ե. տրանսպորտային միջոցների, ինքնաթիռների և այլ փոխադրամիջոցների ու կայանքների շահագործման ընթացքում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի համար սահմանված նորմատիվների, պահանջների ու չափման կարգերի պահպանում,

զ. բնակավայրերում արտադրական, սպառման թափոնների և մթնոլորտը փոշիով, վնասակար գազերով ու գարշահոտ նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող թափոնների պահեստավորման կամ դրանց այրման սահմանափակումների, պահանջների պահպանում,

է. մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի արտանետումների պետական հաշվառման վարման կանոնների կատարում,

ը. նոր օբյեկտների կառուցման, գործող օբյեկտի վերազինման, գոյություն ունեցող տեխնոլոգիական գործընթացների, սարքավորումների կատարելագործման ու ներդրման դեպքում մթնոլորտային օդի վիճակի վրա վնասակար ներգործության նորմատիվների ու պահանջների պահպանում,

թ. կառուցվող, վերակառուցվող ու քանդվող օբյեկտների շինարարության ընթացքում փոշու արտանետումների համար սահմանված նորմատիվների ու պահանջների պահպանում,

ժ. բույսերի պաշտպանության միջոցների, հանքային պարարտանյութերի փոխադրման, պահման և կիրառման կանոնների պահպանում,

ժա. օգոնային շերտի պահպանության համար սահմանված սահմանափակումների և պահանջների պահպանում.

2) ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն՝

ա. ջրային ռեսուրսների ինքնակամ և ոչ նպատակային օգտագործման սահմանափակումների պահպանում,

բ. ջրօգտագործման թույլտվություն և ազատ ջրօգտագործում պահանջող ջրօգտագործման իրականացման պահանջների կատարում,

գ. ջրային ռեսուրսները սահմանված չափաքանակներից ավելի աղտոտվելուց զերծ պահելու համար սահմանված սահմանափակումների ու նորմերի պահպանում և ջրահավաք ավազաններում ջրային ռեժիմի սահմանափակումների պահպանում,

դ. ջրային ռեսուրսների պետական հաշվառման վարման կանոնների պահպանում,

ե. ջրային ռեսուրսների վրա անուղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբյուրների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրման պահանջների կատարում,

զ. ջրային ռեսուրսների վիճակի վրա ազդող աշխատանքների կատարման համար սահմանված պահանջների կատարում,

է. հանգստի և սպորտի համար ջրային ռեսուրսներից օգտվելու սահմանված պահանջների կատարում,

ը. ջրի ազգային ծրագրով սահմանված ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման նորմերի՝ չափաքանակների ու սահմանափակումների կատարում,

թ. ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման (բացառությամբ ջրային համակարգերի սանիտարական պահպանության և անօտարելի գոտիների) պահանջների կատարում,

ժ. ջրի ազգային ծրագրով սահմանված ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման նորմերի՝ չափաքանակների ու սահմանափակումների կատարում.

3) հողերի օգտագործում և պահպանություն՝

ա. հողերը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, աղակալումից, արտադրական և սպառման թափոններով, քիմիական նյութերով աղտոտումից, սողանքներից և հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից պահպանելու համար սահմանված սահմանափակումների ու նորմերի պահպանում և բնապահպանական միջոցառումների կատարում,

բ. հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահման և օգտագործման պահանջների պահպանում,

գ. բնապահպանական՝ ներառյալ բնության հատուկ պահպանվող տարածքների, ընդերքօգտագործման համար տրամադրված հողերի, անտառային և ջրային հողերի օգտագործման համար սահմանված բնապահպանական սահմանափակումների ու նորմերի պահպանում,

դ. բնապահպանական, ջրային, անտառային ֆոնդի հողերի, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողերի նպատակային ու գործառնական նշանակության օգտագործման, ինչպես նաև այդ հողերի սանիտարական և պահպանական գոտիների (բացառությամբ ջրային համակարգերի սանիտարական պահպանման և անօտարելի գոտիների) համար հողաշինարարական, անտառաշինական, քաղաքաշինական փաստաթղթերով և հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմաներով սահմանված նորմերի պահպանում.

4) ընդերքօգտագործում և պահպանություն՝

ա. երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքների, ինչպես նաև դրանց շահագործման համար սահմանված ընդերքօգտագործման պահանջների ապահովում,

բ. ընդերքօգտագործման ընթացքում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքության, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների ապահովում,

գ. ուսումնասիրության աշխատանքային ծրագրերին և արդյունահանման նախագծերին համապատասխան՝ ընդերքօգտագործման աշխատանքների ապահովում,

դ. օգտակար հանածոների պաշարների լիակատար կորզում և հիմնական ու համատեղ գտնվող օգտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի ողջամիտ և համալիր օգտագործում կամ դրանց պահեստավորում ու պահպանում,

ե. ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերին համապատասխան բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն)

աշխատանքների կատարման պահանջների ու պայմանների պահպանման ապահովում,

զ. ընդերքօգտագործման ընթացքում բնապահպանական կառավարման պլանի առկայության ապահովում և պլանով նախատեսված միջոցառումների իրականացում,

է. ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի առկայության ապահովում և պլանով նախատեսված միջոցառումների իրականացում,

ը. ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարում,

թ. իր իրավասության սահմաններում հանքի փակման աշխատանքների՝ հանքի փակման ծրագրին համապատասխան իրականացում,

ժ. օգտակար հանածոների հանքավայրերի մակերեսների ինքնակամ կառուցապատման կանխում և այլ նպատակների համար այդ մակերեսների օգտագործման սահմանված կարգի պահպանում,

ժա. հրդեհումից, հեղեղումից և օգտակար հանածոների որակն ու հանքավայրերի արդյունաբերական արժեքը նվազեցնող կամ դրանց շահագործումը բարդացնող այլ գործոններից օգտակար հանածոների հանքավայրերի պահպանում,

ժբ. հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման և հրաժարման նախագծերի, ծրագրերի կատարման ապահովում,

ժգ. ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների իրականացում.

5) կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն՝

ա. կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության համար սահմանված պահանջների կատարում,

բ. վայրի կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների՝ Արցախի Հանրապետությունից արտահանման, Արցախի Հանրապետություն դրանց ներմուծման սահմանված պահանջների պահպանում,

գ. Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի, ինչպես նաև բուսական համակեցությունների պահպանության համար սահմանված պահանջների պահպանում,

դ. կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների վերաբնակեցման, կլիմայավարժեցման և սելեկցիոն նպատակով դրանց օգտագործման համար սահմանված պահանջների պահպանում,

է. ժամանակակից կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի վերափոխված օրգանիզմների օգտագործման պահանջների պահպանում,

զ. բուսական աշխարհի օբյեկտների աճելավայրերի, ինչպես նաև կենդանական աշխարհի օբյեկտների բնակության միջավայրի, բնադրավայրերի, միգրացիոն ուղիների պահպանության համար սահմանված պահանջների պահպանում,

է. բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների գյուղատնտեսական, արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման պահանջների պահպանում,

ը. վայրի կենդանիների որսի և ձկնորսության կանոնների պահպանում,

թ. բնության հատուկ պահպանվող տարածքների համար սահմանված ռեժիմների պահպանության պահանջների կատարում, ընդհանուր օգտագործման տարածքներում ծառերի, թփերի, զբոսայգիների և այլ կանաչ գոտիների պահպանման համար սահմանված պահանջների կատարում,

ժ. անտառներում ծառերի, թփերի, մատղաշի և մշակաբույսերի պահպանման, ծառերի ու թփերի հատման կանոնների պահպանում,

ժա. անտառներն արտադրական և կենցաղային կեղտաջրերով, արդյունաբերական արտանետումներով, քիմիական նյութերով և թափոններով աղտոտելը կանխարգելող սահմանափակումների պահպանում,

ժբ. անտառային ֆոնդի տարածքներում խոտհնձի, անասունների արածեցման, խոտհարքների և արոտահանդակների օգտագործման կանոնների պահպանում,

ժգ. անտառաշինական փաստաթղթերին համապատասխան անտառավերականգնման և այլ աշխատանքների կատարում.

6) վտանգավոր նյութեր, արտադրության և սպառման թափոններ`

ա. վտանգավոր նյութերի ու թափոնների` Արցախի Հանրապետությունից արտահանման, Արցախի Հանրապետություն դրանց ներմուծման և Արցախի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման համար սահմանված պահանջների պահպանում,

բ. թափոնների գոյացման և տեղադրման նորմատիվային պահանջների կատարում,

գ. թափոնների անձնագրավորման և ռեեստրի վարման կարգի պահանջների կատարում,

դ. թափոնների պետական հաշվառման վարման կանոնների կատարում.

7) բնապահպանական պետական փորձաքննություն`

ա. փորձաքննության ենթարկված փաստաթղթերով ամրագրված պահանջների ու միջոցառումների ապահովում և կատարում.

8) բնապահպանական և բնօգտագործման վճարներ`

ա. բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողների հաշվառման կարգի պահանջների պահպանում,

բ. բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների և վճարների հաշվարկման կարգի պահպանում.

9) վարչական վիճակագրություն`

ա. բնապահպանական և բնօգտագործման վարչական վիճակագրության վարման և հաշվետվությունների ներկայացման կարգի պահպանում:

11. Տեսչությունը բնապահպանական վերահսկողությունն իրականացնում է նաև բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարման նկատմամբ:

12. Տեսչության գործառնություններն են նաև`

1) բնապահպանության և ընդերքի ոլորտներում Արցախի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացումը, տնտեսավարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացումը.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաները, թույլտվություններն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու, ինչպես նաև անձանց հետ կնքված պայմանագրերը վաղաժամկետ լուծելու միջոցառումների ներկայացումը լիազոր մարմիններ.

3) իր վերահսկողության ոլորտներում գործունեություն իրականացնող անձանց հանձնարարականներ, զգուշացումներ տալը, ինչպես նաև որոշակի գործողություններ կատարելուն կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելը.

4) բնական ռեսուրսներին պատճառված վնասի չափը հաշվարկելը և գանձումն ապահովելը.

5) բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների և վճարների հաշվարկման կարգի ստուգում.

6) օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգին համապատասխան տեսչության կողմից վերահսկվող ոլորտներին առնչվող վիճակագրական

հաշվետվությունների, բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ հաշվետվությունների ընդունումը, վերլուծությունը, բնապահպանության և ընդերքի ոլորտներում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը և վերահսկողական գործառնությունների ուղղումը դեպի ավելի ռիսկային ոլորտները, տնտեսավարող սուբյեկտները:

7) իր լիազորությունների շրջանակում բացահայտված՝ օրենքով չարգելված տեղեկատվության փոխանակումն այլ վարչական մարմինների հետ՝ վերահսկողական գործառնություններն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:

8) օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

13. Բնապահպանական պետական տեսչական ստուգումների գործերի վարույթի ընթացքում բնապահպանական պետական տեսուչներն օրենքով սահմանված կարգով իրականացնում են քննություն և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կայացնում որոշումներ:

14. Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բնապահպանական պետական տեսուչներն իրականացնում են վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթ:

15. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում բնապահպանական պետական տեսուչները դադարեցնում, կասեցնում և արգելում են իրավախախտում թույլ տված անձանց գործողությունները:

16. Տեսչության պետական տեսուչներին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով թույլատրվում է պահել, կրել և օգտագործել ծառայողական զենք:

17. Տեսչությունը սահմանված կարգով մասնակցում է տեսչական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի, մեթոդական հրահանգների և ցուցումների մշակմանը, բնապահպանական տեսչական աշխատանքների ոլորտում միջազգային պայմանագրերից բխող՝ Արցախի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարմանը:

4. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

18. Տեսչությունը կառավարում և նրա գործունեությունը համակարգում է կոմիտեի նախագահը:

19. Տեսչության ղեկավարումն իրականացնում է տեսչության պետը, որը միաժամանակ Արցախի Հանրապետության բնապահպանական գլխավոր տեսուչն է: Իր գործունեության ընթացքում տեսչության պետն առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով, կոմիտեի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև իրավական այլ ակտերով:

20. Տեսչության պետը պատասխանատու է տեսչության կողմից վերահսկողական գործառնությունների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև դրանց՝ Արցախի Հանրապետության օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխանության համար:

21. Տեսչության պետը հաշվետու է կոմիտեի նախագահին, իսկ քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ կոմիտեի աշխատակազմի ղեկավարին:

22. Տեսչության պետը՝

1) պատասխանատու է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտներում վերահսկողական գործառնությունների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման, ինչպես նաև դրանց՝ օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխանության համար:

2) ղեկավարում, համակարգում և վերահսկում է տեսչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է տեսչության առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար:

3) կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառի, նպատակների և խնդիրների վերաբերյալ:

4) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրություններ և տալիս հանձնարարագրեր, ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության և տեսչության անունից, ինչպես նաև տալիս է տեսչության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

5) իր իրավասության սահմաններում կոմիտեի աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ տեսչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման վերաբերյալ:

6) պարբերաբար կոմիտեի նախագահին է ներկայացնում տեղեկատվություն տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին:

7) ապահովում է կոմիտեի նախագահի հրամանների, ցուցումների, հանձնարարականների ու առաջարկանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում կոմիտեի նախագահին:

8) կոմիտեի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների իրավասությունները:

9) վերահսկողություն է իրականացնում տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ:

10) կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ տեսչության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև տեսչության խորհրդակցական մարմին ստեղծելու վերաբերյալ:

11) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ:

12) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

5. ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Օրենքով, իրավական այլ ակտերով, կոմիտեի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ տեսչությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է կոմիտեի աշխատակազմը:

24. Տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

25. Տեսչության վերակազմակերպման և նրա գործունեության դադարեցման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով և իրավական այլ ակտերով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ընդերքի շահագործման, երկրաբանական ուսումնասիրությունների և հողերի վերահսկողության բաժին
2. Ջրերի և մթնոլորտի, կենսաբազմազանության և թափոնների վերահսկողության բաժին

II. Տարածքային ստորաբաժանումներ

1. Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանում
2. Ասկերանի տարածքային ստորաբաժանում
3. Մարտունու տարածքային ստորաբաժանում
4. Մարտակերտի տարածքային ստորաբաժանում
5. Հադրութի տարածքային ստորաբաժանում
6. Շուշիի տարածքային ստորաբաժանում
7. Շահումյանի տարածքային ստորաբաժանում
8. Քաշայթաղի տարածքային ստորաբաժանում

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 հուլիսի 2020թ.

N 172-Ն

ք. Ստեփանակերտ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 7-րդ հոդվածը, 9-րդ հոդվածի 1-ին կետը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի մայիսի 26-ի ՆՀ-3-Ն հրամանագրով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ք ո շ ու մ է***.

1. Ստեղծել «Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

2. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ նաև ծառայություն) պետական վերահսկողության ոլորտում գործող պետական կառավարման մարմին է:

2. Ծառայությունը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Ծառայությունը գործում է Արցախի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Ծառայության լրիվ անվանումն է՝

1) հայերեն՝ Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն.

2) ռուսերեն՝ Служба государственного надзора Республики Арцах.

3) անգլերեն՝ State Supervision Service of the Republic of Artsakh:

5. Ծառայությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ ու անհատականացման այլ միջոցներ:

6. Ծառայությունը կազմված է ծառայության պետից, ծառայության պետի տեղակալից, ծառայության պետի մամուլի քարտուղարից, ծառայության պետի օգնականից, ծառայության աշխատակազմից:

7. Ծառայության գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Փետրվարի 20 փողոց, N 1 կառավարության շենք:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Ծառայության գործունեության նպատակը սույն կանոնադրությամբ վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացումն ապահովելն է:

9. Նշված նպատակի հիման վրա ծառայությունը

1) պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ՝

ա. Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների ու հանձնարարականների, Արցախի Հանրապետության կառավարության որոշումների, Արցախի Հանրապետության Նախագահի գործունեության միջոցառումների ծրագրերի կատարման նկատմամբ վերահսկողության նպատակով,

բ. դրանց գործունեության օրինականության և արդյունավետության վերահսկողության նպատակով,

գ. պետական միջոցների կառավարման և ձևավորման արդյունավետության և օրինականության վերահսկողության նպատակով.

2) Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների կառավարման օրինականության վերահսկողության նպատակով.

3) տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով.

4) պետական միջոցների ձևավորման գործառույթ իրականացնող լիազորված անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների ձևավորման օրինականության վերահսկողության նպատակով.

5) Արցախի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Արցախի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Արցախի Հանրապետության ներկայացուցչի լիազորություններից բխող վերահսկողության իրականացման նպատակով.

6) Արցախի Հանրապետության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքների կողմ հանդիսացող անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Արցախի Հանրապետության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքներից բխող և դրանց պայմանների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով՝ բացառությամբ պայմանագրից բխող ցուցումներ տալու, որն իրականացվում է պայմանագրով Արցախի Հանրապետության անունից հանդես եկող լիազոր մարմնի միջոցով.

7) պետությունից, համայնքից, պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից, պետության, համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության նպատակով.

8) Արցախի Հանրապետությունից սուբսիդիա և դրամաշնորհ ստացած անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոց տրամադրելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով.

9) պետական միջոցների կառավարման և ձևավորման հակաօրինական գործողությունների, չարաշահումների վտանգի և հնարավոր վնասների առաջացման ռիսկերի դեպքերում նշված ռիսկերի հիմնավորվածությունը պարզելու, գնահատելու, կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով Արցախի Հանրապետության Նախագահի համաձայնությամբ իրավասու է առաջարկելու կասեցնել գործարքների կատարումը, ինչպես նաև դրանց կնքմանն ուղղված ընթացակարգերը կամ գործողությունները.

10) Արցախի Հանրապետության Նախագահի հանձնարարությամբ իրականացնում է կարգապահական վարույթներ.

11) ստացված դիմումները, բողոքները և հանրագրերը հասցեագրում է իրավասու պետական կառավարման համակարգի մարմիններին և վերահսկում դրանց ընթացքը.

12) իրականացնում է հանդիպակաց ուսումնասիրություններ՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով.

13) ներկայացնում է վերահսկողության արդյունքներից բխող պահանջվող միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ և իրականացնում դրանց կատարման նկատմամբ հսկողություն.

14) համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների ու օտարերկրյա պետությունների համապատասխան կառույցների հետ.

15) առաջարկություններ է ներկայացնում պետական կառավարման ոլորտում իրավական ակտերի նախագծերի և փոփոխությունների (լրացումների) վերաբերյալ.

16) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրներ:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Ծառայությունն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) ծառայության կողմից ուսումնասիրություններն իրականացվում են ծառայության պետի կողմից տրված հանձնարարագրերի հիման վրա՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության Նախագահի հետ: Հանձնարարագրերում սահմանվում են ուսումնասիրություն իրականացնող մարմնի անվանումը, վերահսկվող օբյեկտի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, ուսումնասիրության ենթակա ոլորտը կամ դրա համապատասխան մասը, ուսումնասիրության ենթակա ժամանակահատվածը, ուսումնասիրություն կատարելու ժամկետը և վայրը, ուսումնասիրություն կատարող պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (պաշտոնի անվանումը, անունը և ազգանունը): Պետական կառավարման համակարգի մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում ուսումնասիրություններ կամ ստուգումներ կատարելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում ծառայությունը Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով կարող է միջնորդություն ներկայացնել իրավասու մարմնին՝ իրականացնելու տվյալ մարմնի լիազորություններից բխող վերահսկողական գործառնություններ՝ արդյունքների վերաբերյալ տեղեկացնելով ծառայությանը: Ուսումնասիրությունը կարող է կատարվել ինչպես արտագնա, այնպես էլ ծառայությունում՝ ուսումնասիրությանը վերաբերող նյութեր պահանջելու, ինչպես նաև էլեկտրոնային համակարգերում ուսումնասիրությունն ապահովելու միջոցով: Ուսումնասիրությունը կատարվում է նյութեր, առարկաներ, փաստաթղթեր ու տեղեկատվություն, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ապրանքանյութական արժեքների գույքագրման կատարում պահանջելու և ուսումնասիրելու միջոցով: Ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրություն իրականացնողն իրավունք ունի պահանջելու գրավոր պարզաբանումներ, որոնք ենթակա են տրամադրման ներկայացված պահանջով սահմանված ժամկետում: Ուսումնասիրության արդյունքները ամփոփվում են համապատասխան տեղեկանքով (այսուհետ՝ տեղեկանք): Տեղեկանքը տրամադրվում է վերահսկվող օբյեկտին դրա վերաբերյալ կարծիք ներկայացնելու նպատակով: Ուսումնասիրության արդյունքներն ընդգրկում են տեղեկանքը և ուսումնասիրության շրջանակներում ձեռք բերված բոլոր նյութերը՝ ներառյալ տեղեկանքի վերաբերյալ ներկայացված կարծիքը: Ուսումնասիրության արդյունքները զեկուցվում են Արցախի Հանրապետության Նախագահին և կարող են հիմք հանդիսանալ Արցախի Հանրապետության Նախագահի կողմից համապատասխան հանձնարարականներ տալու և պատասխանատվության միջոցներ կիրառելու կամ դրանց կիրառման մասին հանձնարարականներ տալու համար:

2) ծառայության կողմից հանդիպակաց ուսումնասիրությունները գործարքի մյուս կողմի մոտ իրականացվում են ծառայության պետի կողմից տրված հանձնարարագրի հիման վրա՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության Նախագահի հետ: Ծառայության կողմից հանդիպակաց ուսումնասիրությունները տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվում են բացառապես Արցախի Հանրապետության Նախագահի հանձնարարականի հիման վրա: Ծառայությունը հանդիպակաց ուսումնասիրություններ գործարքի մյուս կողմի մոտ իրականացնում է բացառապես այն դեպքերում, երբ վերահսկվող օբյեկտի մոտ ուսումնասիրության շրջանակներում ծառայությանն անհրաժեշտ տեղեկություններն ամբողջական չեն, ու առանց հանդիպակաց ուսումնասիրություն կատարելու հնարավոր չէ գնահատել ուսումնասիրվող գործարքը: Ծառայությունը հանդիպակաց ուսումնասիրություններ տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացնում է բացառապես այն դեպքերում, երբ պետական կառավարման համակարգի մարմիններում իրականացվող ուսումնասիրության շրջանակներում

ծառայությանն անհրաժեշտ տեղեկություններն ամբողջական չեն, ու առանց տեղական ինքնակառավարման մարմնում հանդիպակաց ուսումնասիրություն կատարելու հնարավոր չէ գնահատել ուսումնասիրվող պետական կառավարման համակարգի մարմնի գործունեության օրինականությունը և արդյունավետությունը: Հանդիպակաց ուսումնասիրությունը գործարքի մյուս կողմի մոտ սահմանափակվում է գործարքն ուսումնասիրելու պահի դրությամբ դրանով սահմանված պարտավորությունների փաստացի կատարման պայմանների, փաստաթղթերի և այլ կրիչների ուսումնասիրմամբ և այդ նպատակով անձանցից նյութեր, առարկաներ, տեղեկատվություն ու պարզաբանումներ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ապրանքանյութական արժեքների գույքագրման կատարում պահանջելով և ստանալով՝ առանց այդ անձանց բնականոն գործունեությունը խաթարելու:

3) ծառայության կողմից մշտադիտարկումն իրականացվում է ստացված տեղեկությունների, դիմումների, բողոքների, հանրագրերի, փաստաթղթերի և հաղորդումների ուսումնասիրության, վերլուծության և ամփոփման, Արցախի Հանրապետության Նախագահին առաջարկություններ ներկայացնելու նպատակով՝ Արցախի Հանրապետության կառավարության գործունեության ու տեսչությունների գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագրերի համադրման, ինչպես նաև տեղեկատվական համակարգերից և տվյալների շտեմարաններից ձեռք բերված ու տեսչությունների գործունեության արդյունքների վերաբերյալ ստացված տեղեկատվության վերլուծության միջոցով: Տեղեկատվական համակարգերին և տվյալների շտեմարաններին հասանելիությունն ու տեսչությունների գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ստացումն ապահովվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

4) իրականացված վերահսկողության արդյունքներով ծառայությունը վերլուծում է արձանագրված խախտումները, խնդիրները, դրանց պատճառները, հանգամանքները ու հետևանքները՝ դրանց վերաբերյալ Արցախի Հանրապետության Նախագահին ներկայացնելով տեղեկանքներ և զեկույցներ, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ դրա վերաբերյալ հանձնարարական տալու առաջարկություններ:

5) վերահսկողության արդյունքների ամփոփման, ինչպես նաև գործունեության արդյունավետության բարձրացման, առկա բացթողումների ու թերությունների վերացման վերաբերյալ Արցախի Հանրապետության Նախագահին ու վերահսկվող օբյեկտներին ներկայացվում են առաջարկություններ:

6) ծառայությունը վերահսկողություն իրականացնելիս.

ա. Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ստանում է անհատույց և ազատ հասանելիություն վերահսկվող օբյեկտում կամ դրա պաշտոնատար անձի մոտ գտնվող և ծառայության լիազորություններին առնչվող բոլոր թղթային կամ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններին ու համակարգերին, տեղեկություններին և փաստաթղթերին,

բ. ունի մուտքի հնարավորություն վերահսկվող օբյեկտի տարածքներ, այդ թվում՝ հատուկ հսկողության տակ գտնվող տարածքներ,

գ. իրավասու է վերահսկվող օբյեկտներից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու ծառայության գործառույթներին առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, տեղեկանքներ, պարզաբանումներ,

դ. իրավասու է, անհրաժեշտության դեպքում, վերահսկողությանը մասնակից դարձնելու վերահսկվող օբյեկտի ներքին աուդիտորների (տվյալ կազմակերպության ղեկավարի համաձայնությամբ), մասնագետների, փորձագետների և գիտական հաստատությունների ներկայացուցիչների, կազմավորել ժամանակավոր աշխատանքային խմբեր,

ե. սահմանված պահանջների պահպանմամբ հավաքագրում է տեղեկատվություն, էլեկտրոնային կամ թղթային կրիչներով, կատարվող հարցումների կամ օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով, ինչպես նաև առկա

տեղեկատվական էլեկտրոնային բազաներին՝ առցանց հասանելիության միջոցով, ստանում և դասակարգում է հավաքագրված տեղեկությունները,

գ. առցանց ստացվող, հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով հավաքագրվող տեղեկատվությունը համակարգված ամփոփում և համադրում է վերլուծության առարկայի կամ վերլուծության ենթակա երևույթի փաստացի վիճակի հետ՝ առկա իրողությունները պարզելու և դրանց համապատասխան գնահատական տալու նպատակով,

է. կատարում է այցելություններ երևույթների, իրադարձությունների, իրողությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման և գնահատման նպատակով,

ը. կատարում է տարածքների, շինությունների, փոխադրամիջոցների, առարկաների, փաստաթղթերի, սարքավորումների (այդ թվում՝ էլեկտրոնային) հետազոտում, տեղատեսություն, որի ընթացքում կարող է իրականացվել լուսանկարում, տեսագրում, փաստաթղթերի պատճենահանում,

թ. կարող է իրականացնել ապրանքների, աշխատանքների, ծառայությունների փաստացի ձեռքբերման գների հետ համադրմանն ուղղված՝ նույն կամ նույնանման ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, ինչպես նաև ապրանքների՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վաճառքի չափորոշիչների պարզելուն ուղղված ձեռքբերում,

ժ. հատուկ փորձագիտական գնահատական պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտությունից ելնելով՝ նախաձեռնում է փորձաքննության իրականացում՝ անհրաժեշտության դեպքում առարկաներ, փորձանմուշներ և փաստաթղթեր վերցնելու միջոցով,

Ճ. կատարված և ավարտված գործողությունների կամ դրանց փուլերի երկրորդման եղանակով ստացված արդյունքները համադրում է հաշվառմամբ արտացոլված արդյունքների հետ.

7) Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հավաքագրում, ամփոփում և Արցախի Հանրապետության Նախագահին է ներկայացնում պետական կառավարման համակարգի համապատասխան մարմիններից սահմանված ձևին և կարգին համապատասխան ստացվող օպերատիվ տեղեկատվությունը.

8) ապահովում է ծառայության աշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործումը, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վերապատրաստման գործընթացների կազմակերպումը, աջակցությունը և աստատվորումը.

9) իրականացնում է Արցախի Հանրապետության Նախագահի հանձնարարականները, որի արդյունքում կազմում է տեղեկանքներ կամ ներկայացնում է առաջարկություններ կամ տեղեկատվություն.

10) ծառայության պետի և աշխատակազմի ղեկավարի՝ գորահավաքային և քաղաքացիական պաշտպանության գծով հրամանների նախագծերի մասին համապատասխան աշխատողներին տեղեկացնելու, ծառայության գորահավաքային նախապատրաստության, գորահավաքային նախապատրաստության ծրագրերի, պլանների մշակման, գիտամեթոդական, տեղեկատվական, մեթոդական և կազմակերպչական, զինապարտների հաշվառման և հատուկ զինվորական հաշվառման ենթակա պահեստագորայինների ամրագրման, ուսումնական վարժանքների անցկացման, քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման և դրանց գծով պարտականությունների կատարման նկատմամբ հսկողության աշխատանքների իրականացում:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

11. Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Արցախի Հանրապետության Նախագահը:

12. Ծառայությունը ղեկավարում է ծառայության պետը (այսուհետ՝ պետ), ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

13. Պետն ունի տեղակալ, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ պետի առաջարկությամբ:

14. Պետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և իրավական այլ ակտերով:

15. Պետի և նրա տեղակալի պաշտոնները հայեցողական պաշտոններ են: Պետին անմիջական հաշվետու և ենթակա են պետի տեղակալը, աշխատակազմի ղեկավարը, պետի մամուլի քարտուղարը, պետի օգնականը և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

16. Պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին:

17. Պետը՝

1) պատասխանատու է Արցախի Հանրապետության Նախագահին՝ ծառայության առջև դրված խնդիրների ու գործառնությունների իրականացման համար:

2) առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

3) նշանակում և ազատում է իր օգնականին և մամուլի քարտուղարին:

4) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է ծառայության համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:

5) հաստատում է ծառայության հաստիքացուցակը:

6) Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ծառայության աշխատողների թիվը, աշխատակազմի կառուցվածքը, ինչպես նաև դրա փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ:

7) սահմանում է կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

8) հաստատում է ծառայության ներքին կարգապահական կանոնները:

9) ձևավորում է աշխատանքային խմբեր, իրեն կից խորհրդակցական մարմիններ:

10) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում աշխատակազմի ղեկավարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները:

11) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալի, աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները:

12) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

13) Արցախի Հանրապետության կառավարությանն է ներկայացնում ծառայության գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, հաստատում ծառայության տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները:

14) ծառայությանը վերապահված լիազորությունների սահմաններում ընդունում է իրավական ակտեր, արձակում է հրամաններ, տալիս հանձնարարականներ,

ցուցումներ, հրապարակում է հանձնարարագրեր, վերահսկում դրանց կատարման ընթացքը, լսում է ծառայության աշխատողների գործողությունների դեմ ներկայացված բողոքները:

15) կարող է առանձին դեպքերում օգնականին վերապահել պետի լիազորությունների իրականացման աջակցման որոշակի աշխատանքներ, ծրագրերի համակարգում, որի իրականացման համար վերջինս իրավունք ունի կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալու տվյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն:

16) վերահսկողություն է իրականացնում ծառայության ամրացված պետական սեփականության պահպանության ու օգտագործման նկատմամբ:

17) համապատասխան հրամանով առանձին բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը վերապահում է իրեն, ինչպես նաև պետի տեղակալին, կատարում է աշխատանքային պարտականությունների բաշխում իր տեղակալի, օգնականի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների միջև:

18) պետական միջոցների կառավարման և ձևավորման հակաօրինական գործողությունների, չարաշահումների վտանգի և հնարավոր վնասների առաջացման ռիսկերի դեպքերում նշված ռիսկերի հիմնավորվածությունը պարզելու, գնահատելու կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով Արցախի Հանրապետության Նախագահի համաձայնությամբ ներկայացնում է գործարքի կատարումը կամ դրանց կնքմանն ուղղված ընթացակարգերը կամ գործողությունները կասեցնելու վերաբերյալ առաջարկություններ:

19) ներկայացնում է ծառայությունը Արցախի Հանրապետությունում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում:

20) այլ մարմիններից, դրանց ղեկավար պաշտոնատար անձանցից պահանջում է անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր, գրավոր կամ բանավոր պարզաբանումներ:

21) հաստատում է ծառայության գործունեության աշխատանքային ծրագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները:

22) կատարում է Արցախի Հանրապետության Նախագահի առանձին հանձնարարականներ:

23) տրամադրում է արձակուրդ ծառայության աշխատակազմի ղեկավարին՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և դրանով սահմանված կարգին համապատասխան:

24) իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված այլ լիազորություններ:

18. Պետի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, պետի պարտականությունները կատարում է պետի տեղակալը:

19. Պետի տեղակալը՝

1) համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված ոլորտում:

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներին փոխանցում է պետի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ ու դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն և արդյունքների մասին գեկուցում պետին:

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է աշխատակազմի ղեկավարի, այլ մարմինների և կազմակերպությունների հետ:

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում պետին ներկայացնում է առաջարկություններ:

5) իրականացնում է պետի կողմից տրված ցուցումներն ու հանձնարարականները:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

20. Ծառայության աշխատակազմի նպատակը և խնդիրը ծառայությանը օրենքներով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին ծառայության մասնակցության ապահովումն է:

21. Ծառայության աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

22. Ծառայության աշխատակազմը գործում է Քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

23. Ծառայության աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է Արցախի Հանրապետության անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

24. Ծառայության աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

25. Ծառայության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

26. Ծառայության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Ծառայության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

27. Ծառայության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Ծառայության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև ծառայության լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով:

28. Ծառայության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

29. Ծառայության աշխատակազմի անվանումն է՝ «Արցախի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

6. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

30. Ծառայության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Արցախի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքներով ձեռք բերված և ծառայության աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ ծառայության աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

31. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու ծառայության աշխատակազմի գույքը:

32. Ծառայության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, իրավական այլ ակտերով ու իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր

գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իր գույքը:

7. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

33. Ծառայության աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, բաժիններ) և առանձնացված ստորաբաժանումները (ծառայություններ, գործակալություններ, տեսչություններ):

34. Ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է պետը:

35. Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ պետի ներկայացմամբ:

36. Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծառայություններ մատուցող, վերահսկողական գործառույթներ և պատասխանատվության միջոցներ կիրառող մարմին է:

37. Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է նաև ծառայության աշխատակազմի առանձին գործառույթներ կամ դրանց մի մասը և հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից:

38. Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

39. Ծառայության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և ծառայության աշխատակազմի ու իր՝ հայերեն անվանումներով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

8. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

40. Ծառայության աշխատակազմի կառավարումն իրականացնում են Արցախի Հանրապետության կառավարությունն ու պետը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

41. Ծառայության աշխատակազմը ղեկավարում է ծառայության աշխատակազմի ղեկավարը, որին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

42. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) վերակազմակերպում և դադարեցնում է ծառայության աշխատակազմի գործունեությունը.

2) հաստատում է ծառայության կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները.

3) հաստատում է ծառայության աշխատակազմի կառուցվածքը և դրանում կատարվող փոփոխությունները.

4) հաստատում է աշխատակազմի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

5) ծառայության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է ծառայության գործունեության հիմնական ուղղությունները.

6) որոշում է ծառայության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

7) իրականացնում է աշխատակազմի ընթացիկ գործունեության վերահսկողությունը.

8) լսում է աշխատակազմի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները.

9) իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված այլ լիազորություններ:

43. Ծառայության աշխատակազմի ղեկավարն օրենքով, իրավական այլ ակտերով, պետի հրամաններով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է ծառայության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Արցախի Հանրապետության կառավարության որոշումների ու պետի հրամանների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

44. Ծառայության աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված վնասի համար: Ծառայության աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

45. Ծառայության աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, պետի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները:

46. Ծառայության աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է ծառայության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից մեկը՝ պետի հրամանով:

47. Ծառայության աշխատակազմի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ վերը նշված գործողություններն իրականացնելու համար.

2) օրենքով, իրավական այլ ակտերով, հիմնադրի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) իր իրավասության սահմաններում տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) ապահովում է աշխատակազմում քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրության և իրավական այլ ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառնությունների իրականացումը.

5) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին և տեխնիկական սպասարկումն ապահովող աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

6) օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ.

7) պետի հաստատմանն է ներկայացնում ծառայության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է ծառայության աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, պետի հաստատմանն է ներկայացնում ծառայության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան

հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

8) պետին է ներկայացնում առաջարկություններ ծառայության աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

9) կազմակերպում է ծառայության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցներից ծախսերի կատարումը.

10) կազմակերպում է ծառայությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը.

11) վերահսկում է ծառայության աշխատակազմի կողմից՝ սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը.

12) պետի ստորագրությանն է ներկայացնում պետի հրամանները.

13) ապահովում է համագործակցությունը Արցախի Հանրապետության պետական իշխանության այլ մարմինների աշխատակազմերի հետ.

14) կազմակերպում է ծառայությունում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

15) իրականացնում է օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

9. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

48. Ծառայության աշխատակազմն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

49. Ծառայության աշխատակազմի գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, ծառայության աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

50. Ծառայության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

10. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐՈՒՄԸ

51. Ծառայության աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Տնտեսական ոլորտի վերահսկողության բաժին
2. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների
վերահսկողության բաժին
3. Սոցիալական ոլորտի վերահսկողության բաժին
4. Պետաիրավական ոլորտի վերահսկողության բաժին
5. Գնումների գործընթացների վերահսկողության բաժին
6. Մոնիթորինգի և վերլուծության բաժին
7. Դիմումների ուսումնասիրության և քաղաքացիների ընդունելության բաժին
8. Իրավաբանական բաժին
9. Հաշվապահական հաշվառման և գնումների կազմակերպման բաժին
10. Ընդհանուր բաժին

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի հունիսի 30-ի

«ԱՐՑԱՄԳԱԶ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՄՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱԿԱԳՆԵՐԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՏՄԲԵՐԻ
24-Ի N 44Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 31-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետը, 15-րդ և 16-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 30-ի N 1-Ն որոշումը և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 23-ի N 735-Ն որոշումն ու «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի հունիսի 3-ի N 202/3-2 գրությամբ ներկայացված հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

1) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման բանաձևը՝ նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝

$$P_{\text{գ}} = 224 * E,$$

որտեղ՝

$P_{\text{գ}}$ -ն գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող ջերմոցային տնտեսություններին նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը ներառյալ ժամանակահատվածում վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (ՀՀ դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

E -ն յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա 25-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունն է,

բ. սակագինը՝ ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածի համար՝ ամսական մինչև 10 000 խորանարդ մետր

բնական գազի համար՝ սույն կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված սակագինն հավասար, իսկ ամսական 10 000 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝ սույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված բանաձևի համաձայն հաշվարկվող սակագինն հավասար.

2) գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող անձանց վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝ յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$P_{\alpha} = 224 * E,$$

որտեղ՝

P_{α} -ն գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող վերամշակող անձանց վաճառվող բնական գազի յուրաքանչյուր հաշվետու ամսվա սակագինն է (ՀՀ դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի՝

ա. սակագինը՝ ամսական մինչև 10 000 խորանարդ մետր բնական գազի համար՝ **139 000 ՀՀ դրամ**՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝ 10 000 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի համար՝

$$P = 255.91 * E,$$

որտեղ՝

P -ն սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով չնախատեսված մյուս սպառողներին վաճառվող յուրաքանչյուր հաշվետու ամսում 10 000 խորանարդ մետրը գերազանցող բնական գազի սակագինն է (ՀՀ դրամ/հազար խորանարդ մետր)՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Արցախագազ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները սահմանելու և Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 1-ի N 31Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 44Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի օգոստոսի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թվականի հունիսի 30

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2020 թվականի հունիսի 30-ի

«ՂԱՐԱԲԱՂ ՏԵԼԵԿՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ
ՄԻ ՇԱՐՔ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
N 0027 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 32-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 24-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 3Ն որոշումը և հաշվի առնելով «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ապրիլի 23-ի հայտը՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Երկարաձգել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 29-ի ««Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածներում մի շարք ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» թիվ 36Ա որոշմամբ «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածներում մի շարք ռադիոհաճախականությունների օգտագործման N 0027 թույլտվության գործողության ժամկետը մինչև 2030 թվականի հուլիսի 29-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 30-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թվականի հունիսի 30
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

2020 թվականի հունիսի 30-ի

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 33-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 27-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերը, 28-րդ հոդվածի 2-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի ««Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Արցախի Հանրապետությունում մատուցվող ծառայությունների առավելագույն սակագները սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման 1-ին կետի՝

- 1) 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածում՝
- ա. հավելվածից հանել 1.7-րդ և 2.3-րդ տողերը,
- բ. 4.6-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ,

«

4.6	Զանգեր դեպի Հայաստանի Հանրապետության շարժական ցանց	դրամ/րոպե	28	28	28
-----	--	-----------	----	----	----

».

գ. հավելվածից հանել 5-րդ տողը.

2) 2-րդ ենթակետով սահմանված N 2 հավելվածի 3.5-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3.5	Զանգեր դեպի Հայաստանի Հանրապետության շարժական ցանց	դրամ/րոպե	28
-----	--	-----------	----

».

- 3) 3-րդ ենթակետով սահմանված N 3 հավելվածում՝
- ա. 1.3.3-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1.3.3	Ձանգեր դեպի Հայաստանի Հանրապետության շարժական ցանց	դրամ/րոպե	28
-------	---	-----------	----

»,

բ. 2.2.3-րդ ու 2.2.4-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2.2.3	Ձանգեր դեպի Հայաստանի Հանրապետության շարժական ցանց	դրամ/րոպե	28
2.2.4	Ձանգեր դեպի Հայաստանի Հանրապետության ամրակցված ցանց	դրամ/րոպե	28

»,

գ. հավելվածից հանել 3-րդ տողը.

4) 5-րդ ենթակետով սահմանված N 5 հավելվածում 2.4-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

2.4	Ձանգեր դեպի Հայաստանի Հանրապետության շարժական ցանց	դրամ/րոպե	28
-----	---	-----------	----

».

5) 6-րդ ենթակետով սահմանված N 6 հավելվածից հանել 2.4-րդ և 2.4.1-րդ տողերը.

6) 7-րդ ենթակետով սահմանված N 7 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թվականի հունիսի 30

ք. Ստեփանակերտ

Հավելված
Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 30-ի N 33-Ն որոշման

«Հավելված N 7
Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և
տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 73-Ն որոշման

**ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԱԿԱԳՆԵՐ
ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հ/Հ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ (ՄԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԼԱՆԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տրամադրվող թրաֆիկի ծավալը՝ ՄԲ (ներբեռնում և վերբեռնում)	Վավերականության ժամկետը ակտիվացման պահից (օր)	Չափի միավորը	Մակագինը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, ՀՀ դրամ
1	Կանխավճարային համակարգի շարժական համացանցի ծառայություններ				
1.1	«Մեզա 25» (ակտիվացման հրահանգ՝ *200*25#)	33	10	դրամ	500
1.2	«Մեզա 50» (ակտիվացման հրահանգ՝ *200*50#)	58	20	դրամ	750
1.3	«Մեզա 100» (ակտիվացման հրահանգ՝ *200*100#)	114	20	դրամ	1250
1.4	«Մեզա 200» (ակտիվացման հրահանգ՝ *200*200#)	200	30	դրամ	1900
1.5	«Մեզա 300» (ակտիվացման հրահանգ՝ *200*300#)	300	30	դրամ	2300
1.6	«Գիզա 1» (ակտիվացման հրահանգ՝ *200*1#)	1024	30	դրամ	5600
1.7	«Գիզա 3» (ակտիվացման հրահանգ՝ *200*3#)	3072	30	դրամ	7800
1.8	«Գիզա 5» (ակտիվացման հրահանգ՝ *200*5#)	5120	30	դրամ	9800
2	Հետվճարային համակարգի շարժական համացանցի ծառայություններ				

2.1	«Մեզա 25»* (ակտիվացման հրահանգ՝ *200*25#)	33	Չօգտագործված թրաֆիկի ծավալը գրոյացվում է յուրաքանչյուր ամսվա վերջում	դրամ	500
2.2	«Մեզա 50»* (ակտիվացման հրահանգ՝ *200*50#)	58		դրամ	750
2.3	«Մեզա 150»* (ակտիվացման հրահանգ՝ *200*150#)	182		դրամ	2000
2.4	«Մեզա 500»* (ակտիվացման հրահանգ՝ *200*500#)	500		դրամ	3500
2.5	«Գիզա 1»* (ակտիվացման հրահանգ՝ *200*1#)	1024		դրամ	6000
2.6	Սակագնային պլաններում ընդգրկված ծավալի սպառումից հետո	1		դրամ/ ՄԲ	15
2.7	«Մեզաօ գնական» (ակտիվացման հրահանգ՝ *200*75#)	75		դրամ	900

*Տվյալ սակագնային պլանի մեջ ընդգրկված ծավալը յուրաքանչյուր ամսվա սկզբին ավտոմատ կերպով կտրամադրվի բաժանորդին, և նրանից կգանձվի համապատասխան սակագնային պլանի գումարը: Սակայն բաժանորդն ինքնուրույն կամ բաժանորդների սպասարկման գործակալների օգնությամբ կարող է անջատել իր ծառայությունը կամ փոխարինել մեկ այլ սակագնային պլանով:

Ծանոթություն.

Շարժական ինտերնետ ծառայության համար ապահովվում է մինչև 3072/3072 (ներբեռնում/վերբեռնում) կբիթ/վրկ արագություն: »:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» հունիսի 2020թ.

N 94

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ
ԱԿՏՈՍՈՌԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱՂԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 19-ի N359-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **անհատ ձեռնարկատեր Վարուժան Սամվելի Ստեփանյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00752 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2) **անհատ ձեռնարկատեր Արթուր Յուրիկի Ղազարյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00561 լիցենզիայի N00003 ներդիր:

2. Դադարեցնել՝

1) **անհատ ձեռնարկատեր Արթուր Յուրիկի Ղազարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00561 լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունը:

2) **ֆիզիկական անձ Անդրանիկ Ժիրայրի Գաբրիելյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00585 լիցենզիայի և լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունները:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«21» մայիսի 2020թ.

N 149-Ա

ք.Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԼԻՑԵՆԶԻԱՑԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ԱՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակներով լիցենզավորող հանձնաժողովի 21.05.2020թ. եզրակացությունը (կցվում է) և ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերության պահանջներով,

հրամայում եմ՝

1. Ներքոնշյալ ընկերությանը տրամադրել լիցենզիա՝ ԱՀ տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակով զբաղվելու համար:

N	Լիցենզավորվող անձի անվանումը և գտնվելու վայրը	Գործունեության տեսակը
1	«ԳՐԱՆԴ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ ք. Ստեփ. Հեքիմյան փող., 2 Յվ/14	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել բնակարանային կոմունալ քաղաքականության և լիցենզավորման բաժնի պետ Ա. Հարությունյանի վրա:

ՆԱԽԱՐԱՐ

Կ. ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ